ՀՈՒՇԱԳԻՐ

ՀՀ գյուղատնտեսության նախարարության և Կաթնամթերք արտադրողների միության միջև կաթնամթերքի արտադրության ոլորտի բնականոն գործունեությունն ու զարգացումն ապահովելու նպատակով համագործակցության վերաբերյալ

ք. Երևան 26 փետրվար 2014թ.

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն), ի դեմս նախարար Սերգո Կարապետյանի և «Կաթնամթերք արտադրողների միություն» իրավաբանական անձանց միությունը, ի դեմս նախագահ Ղուկաս Բունիաթյանի, որը գործում է Կանոնադրության հիման վրա, միասին հիշատակելիս այսուհետ՝ Կողմեր,

Հիմնվելով Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության դրույթների, մասնավորապես՝ կաթնամթերքների արտադրության զարգացման, թարմ և վերամշակված կաթի օգտագործման կարգավորման, պարենային ապահովման մակարդակի բարձրացման, միջազգային համագործակցության զարգացման ու շուկայահանման հնարավորությունների ընդլայնման վրա, պատրաստակամ լինելով համագործակցել այդ նպատակին հասնելու համար, կնքեցին սույն Հուշագիրը հետևյալի մասին.

Հոդված 1. Հուշագրի շրջանակը

Կողմերը համաձայնվեցին համագործակցել տեղական արտադրության կաթնամթերքի զարգացման, արտահանման խրախուսման և տեղական կաթնամթերքի մրցունակության բարձրացմանն ուղղված հետևյալ ուղղություններով.

- կաթնամթերքի որակի և անվտանգության ապահովում,
- նպատակային շուկաներում համատեղ ջանքերով հայկական արտադրանքի վարկանիշի արդյունավետ առաջմղում,
- կաթնամթերք արտադրողների գործունեության կարգավորում, արտադրողներին խորհրդատվության տրամադրում, ոլորտին առնչվող տեղեկատվության փոխանակում, նոր տեխնոլոգիաների և սարքավորումների ներդրման հետ կապված օժանդակության տրամադրում,
- կաթնամթերքի արտադրության համար օգտագործվող կաթի որակի բարելավմանն ու ծավալների ավելացմանն ուղղված աշխատանքների կազմակերպում,
- կաթնամթերքի վերաբերյալ օրենսդրության ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում օրենսդրական նախաձեռնությունների և բարեփոխումների գործընթացին մասնակցություն:

Հոդված 2. Համագործակցության սկզբունքները

Կողմերը համաձայնվեցին համագործակցության համար հիմք ընդունել հետևյալ սկզբունքները.

- ծրագրերի համատեղ մշակման ու իրականացման գործընթացում միության անդամների մասնակցության ապահովում,
- միջազգային մասնագիտացված ցուցահանդեսներին, ֆորումներին, գիտաժողովներին և ոլորտին վերաբերող այլ միջոցառումներին միության անդամների մասնակցության ապահովում,
- առաջիկա 6 տարվա (2014–2020թթ.) համար Հայաստանի Հանրապետությունում կաթնարդյունաբերության (կաթի արտադրության, վերամշակման) ոլորտի զարգացման հեռանկարային ծրագրի համատեղ մշակում և կազմում,
- արտահանման նոր շուկաների բացահայտում, այդ շուկաներ մուտք գործելու հետ կապված խոչընդոտների բացահայտում, անհրաժեշտության դեպքում դրանց վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

Հոդված 3. Կողմերի համաձայնությունը

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը և «Կաթնամթերք արտադրողների միություն» իրավաբանական անձանց միությունը համաձայնվում են.

- ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող նպատակների մշակման ուղղությամբ անցկացնել խորհրդակցություններ, գործնական հանդիպումներ, սեմինարներ՝ տեղական և միջազգային կառույցների ներգրավմամբ, կլոր սեղաններ և այլ միջոցառումներ,
- համատեղ ջանքերով խթանել տեղական կաթնամթերքի արտադրության ու վերամշակման համար տնտեսապես շահավետ պայմանների ապահովմանը,
- աջակցել միության անդամ ընկերություններում որակի և անվտանգության կառավարման համակարգերի (ԻՍՕ 22000, HACCP և այլն) ներդրմանը,
- միջազգային ստանդարտների հիման վրա իրականացնել աջակցություն որակի համակարգերի ներդրման ուղղությամբ, որոնք ուղղված են տեղական կաթնամթերքի որակի բարձրացմանը,
- մասնակցել սույն Հուշագրի իրականացման աշխատանքներին, Կողմերի կազմակերպած հանդիպումներին, քննարկումներին ու միջոցառումներին (սեմինարների, գիտաժողովների, կլոր սեղանների և վերապատրաստման դասընթացներ),
- տրամադրել համատեղ ծրագրերի վերաբերյալ սույն Հուշագրի իրականացմանն առնչվող անհրաժեշտ տեղեկատվություն:

Հոդված 4. Ակնկալվող արդյունքները

- Կաթնամթերքի արտադրության ոլորտի կայուն զարգացման ապահովում
- Հայկական արտադրանքի որակի և միջազգային մրցունակության բարձրացում
- Ժամանակակից տեխնոլոգիաների ներդրում
- Արտահանման շուկաների պահպանում և նոր շուկաներ մուտքի ապահովում:

Հոդված 5. Իրագործում

Կողմերը համաձայնվում են համագործակցությունն իրականացնել պետություն և մասնավոր հատված համագործակցության սկզբունքով՝ նախարարության կողմից մշակվող և իրականացվող ոլորտի ռազմավարական միջոցառումների շրջանակներում:

Կողմերը գործողություններն իրականացնում են ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների, ինչպես նաև սույն հուշագրով ստանձնած հանձնառությունների շրջանակում:

Կողմերը գործողությունների իրականացման ընթացքում պահպանում են սույն Հուշագրի դրույթները և համատեղ աշխատանքի ընթացքում ապահովում փոխըմբռնման մթնոլորտ, բոլոր հարցերի առնչությամբ իրականացնում համաձայնեցված աշխատանք և ցուցաբերում աջակցություն:

Հոդված 6. Հուշագրի գործողության ժամկետը և դադարեցումը,

Սույն հուշագիրը կնքվում է 5 տարի ժամկետով, որի ժամկետը կերկարաձգվի ևս 5 տարով կողմերի համաձայնության դեպքում:

Հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել, եթե կողմերը պարբերաբար չեն կատարում սույն հուշագրով ստանձնած հանձնառությունները: Նման իրավիճակի ստեղծման դեպքում հարցը քննարկվում է Հուշագիրն ստորագրած Կողմերի համատեղ խորհրդակցությունում և կայացվում որոշում՝ Հուշագրի գործողությունը դադարեցնելու մասին:

ՀՀ գյուղատնտեսության նախարար	**«Կաթնամթերք արտադրողների միություն» իրավաբանական անձանց միության նախագահ**
Սերգո Կարապետյան	**Ղուկաս Բունիաթյան**